ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 մարտի 2025 թվականի N 271-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 23-Ի N 740-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի մայիսի 23-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի նկատմամբ սակագնային, մասնավորապես, ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ԱՄԿԵ ԳՐՈՒՊ» բաց բաժնետիրական ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 740-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) «ՀՈՒՄՔ ԵՎ (ԿԱՄ) ՆՅՈՒԹԵՐ» աղյուսակի 7-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

2) «ՀՈՒՄՔ ԵՎ (ԿԱՄ) ՆՅՈՒԹԵՐ» աղյուսակի 1-ին կետի «Անվանումը» սյունակի «Հրահեստ շաղախ» բառերը փոխարինել «Հրահեստ շաղախ, հրահեստ զանգված, հրահեստ խառնուրդ» բառերով.

3) «ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ, ԴՐԱՆՑ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՈՒ ՀԱՄԱԼՐՈՂ ՄԱՍԵՐ» աղյուսակի 1-ին կետի «Քանակը» սյունակի «430 000» թիվը փոխարինել «540 000» թվով.

4) «ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ, ԴՐԱՆՑ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՈՒ ՀԱՄԱԼՐՈՂ ՄԱՍԵՐ» աղյուսակի 1-ին կետի «Արժեքը» սյունակի «295 000 000» թիվը փոխարինել «375 000 000» թվով.

5) «ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ, ԴՐԱՆՑ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՈՒ ՀԱՄԱԼՐՈՂ ՄԱՍԵՐ» աղյուսակի 2-րդ կետի «Քանակը» սյունակի «32 500» թիվը փոխարինել «45 000» թվով.

6) «ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ, ԴՐԱՆՑ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՈՒ ՀԱՄԱԼՐՈՂ ՄԱՍԵՐ» աղյուսակի 2-րդ կետի «Արժեքը» սյունակի «44 000 000» թիվը փոխարինել «61 000 000» թվով.

7) «ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ, ԴՐԱՆՑ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՈՒ ՀԱՄԱԼՐՈՂ ՄԱՍԵՐ» աղյուսակի 3-րդ կետի «Քանակը» սյունակի «7 700» թիվը փոխարինել «8 700» թվով.

8) «ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ, ԴՐԱՆՑ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՈՒ ՀԱՄԱԼՐՈՂ ՄԱՍԵՐ» աղյուսակի 3-րդ կետի «Արժեքը» սյունակի «35 000 000» թիվը փոխարինել «40 000 000» թվով.

9) «ՀՈՒՄՔ ԵՎ (ԿԱՄ) ՆՅՈՒԹԵՐ» աղյուսակը 7-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-10-րդ կետերով՝

«

8.	7202300000	Ֆեռոհամաձուլվածք՝ Ֆեռոսիլիկոմանգան	Ֆեռոհամաձուլվածք՝ Ֆեռոսիլիկոմանգան	կգ	3 000 000	Վրաստան Իրան	Վրաստան Իրան	1 290 000 000	
9.	2804210000	Հեղուկ արգոն	Հեղուկ արգոն	կգ/մ³	400 000/250	Վրաստան Իրան	Վրաստան Իրան	280 000 000	
10.	6815990008	Հրակայուն բետոնից չթրծած արտադրանք	Հրակայուն բետոնից չթրծած արտադրանք՝ պատրաստուկների անընդհատ ձուլման մեքենայի միջանկյալ շերեփի հարվածային արկղեր (կավահողի հիմքով)	կգ	80 000	Թուրքիա Վրաստան	Թուրքիա Վրաստան	90 000 000	

».

10) հավելվածի ցանկի «ԸՆԴԱՄԵՆԸ» պարբերությունում «25 928 595 000» թիվը փոխարինել «7 690 595 000» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

13.03.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ